ժա՞ն լիցի , զի մի զհաստատութեան զայս կար-
ծեսցուք՝ և զգալապէս զօրանծելն . և
եթէ այլ մի լիցի յայսմ արտաքին արարող՝
թէ գիտորոս միայն : Նա արդ՝ է արտա-
քին ինքեան կերակուր . և եթէ կերա-
կուրն է , յայտ է՝ թէ զանազանեալ է ըստ
ներքնոյն . որպէս անբանիցն է զգալին
հոն՝ այսպէս և բանաւորացս Բանն
Աստուծոյ և իմաստութիւն . որպէս ա-
սէ ծուքքն Դաւիթ յեօթանասներորդ
երգեցողութեան Սաղմոսին , թէ « Հովուէր
զնոսա այէլ . և արածէր զնոսա իմաստու-
թեամբ որով , և անմեղութեամբ ձե-
ռաց առաջնորդէր նոցա » . և Տէրն՝
թէ « ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ ,
այլ ամենայն բանիւն Աստուծոյ » : Արդ՝
զկնն իւր Բանն Աստուած ոչ միայն
վարդապետ եւ , այլ և ընկերացն նորա
հանապազ 'ի Գալիլեա՝ ուր ժամադրին
եղև տեսանել զնոսա . որպէս և գրեա-
լ է , իբրև եկեսս զնոսա՝ ասէ « Գնա-
ցէք ուսուցանել՝ աշակերտեցէք զամե-
նայն հեթանոսս . ուսուցէք նոցա պա-
հել իմ զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի

ձեզ »։ Եւ թէ « Հոգին սուրբ եկեալ ու-
սուցէ և յիշեցուսցէ ձեզ զբանն իմ »։ Եւ զիմաստութիւն եւս՝ և ասէ ցՀրէայսն , « Առաքեցից ՚ի ձեզ իմաստունս՝ զորս սպանանէք »։ Եւ Պօղոս , թէ « Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ որ-պէս Հրէից գայթակղութիւն , այսպէս նոցին կոչեցելոցն՝ զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն »։ Եւ զի արօտ է քարոզութիւն , նոյն ինքն ցուցանէ Պօղոս՝ « Տղայաբարոյիցն կա-թըն ասէ ջամբեցի , իսկ կրթեցելոցն ճաշակելեօք՝ հաստատուն կերակուր »։

Տեսանէք , թէ որպէս հասարակ ցու-ցան արածող . զի զոր անդ արօտ ասաց Քրիստոս զաւետարանն՝ որ Քրիստոսին խօսէր , ջամբումն և կերակուր ասէ ։

Այլ պատասխանի ։

Միլ տեսարք , ահա՛ և ոչ յայսմ՛ մասին զրկէ Տէրն զմետասանսն . զի ասաց՝ թէ « Արածեա՛ զոչխարսն » և ո՛չ զհովիւսն . վասն զի հովիւք են և այլ համակարգքն նորա աշակերտքն՝ և արածող նման նո-րա ; վկայէ Պօղոս առ Եփեսացիսն՝ և ասէ , « Նա ետ զոմանս աւետարանիչս , զոմանս հովիւս և վարդապետս »։

Մտածեցէք՝ թէ որպէս յայտնեցայ թէ ոչ այլ ինչ է հոգւոյն և մարմնոյն, քան զհաղորդակցութիւն [illegible] անդրանկական երից [illegible] յայտնութիւն՝ և յայսմ վերիկոսու- [illegible] իսկ յոր, արդ, ասէք մարմնել Պետրոսի [illegible] ըմբռնման Քրիստո- [illegible] զխորհրդութիւնն քան զմե- քենականն՝ արդ պարծիմք ։ իսկ եթէ ոչ կարէք ըմբռնել այն՝ քանզի ոչ գոյ այլ ուրեմն, զուք [illegible] վկայէք թէ մի և նոյն են իշխանութեամբ ։ Արդ անկասկածելի Որդին Աստուծոյ Հօրն ընդ միութիւն իշխանութեան նորա, ասե- լովն՝ [illegible] և [illegible] մի, որպէս կամէր մի կամք [illegible] ՚ի Որդ՝ եթէ ըստ Հօր և Որդւոյ՝ [illegible] ամենայն զայնութիւն երկրպագութեան ըստ Տեառն բանին, յայտ է յանդգնութիւն մուծանել ՚ի նոսա առաւելութիւն և նուազութիւն, զի [illegible] և Որդի վերաբերի. և զա- [illegible] միութիւն զանխըլա- [illegible] խորհուրդն ։

[illegible] Այլ պատասխանի ։

[illegible] մարմնեան զաշխարհս իմ Հաւատամ [illegible] թէ Որ- փառաւորեաց [illegible] Պետրոսի, [illegible] կոչեցեալ

ոչխարս․ քան այնմ, թէ «Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի»․ և թէ «յիւրսն եկն»․ որպէս Պօղոս վկայէ առ Գաղատացիս զյատկութիւնն, թէ «Իբրև տեսին կարծեալ սիւնքն՝ թէ հաւատացեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որպէս Պետրոսի թլփատութեանն»․ և արդ՝ մեր հաւատացեալ՝ թէ ոչ յայսմ վայրի, ցուցէք՝ զի ոչ ասէ վկայն ճշմարիտ։

Իսկ եթէ ասիցէք՝ թէ հեթանոսք ոչ են ոչխարք Քրիստոսի․ թէ այսպէս իցէ, ապա զո՞վ արածեն մեսրոպեանքն․ ասեմք թէ՝ այո՛ և հեթանոսք․ զի Փրկիչս կոչեաց ասելով, «Նա՛ և այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ․ և զայն ևս պարտ է ինձ ածել այսր․ և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ»․ և Պօղոս վկայէ թէ «Չիք խտիր, ոչ հրէի, և ոչ հեթանոսի․ զի ամենեքին դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս»։ Տեսանէք՝ թէ որպէս ցուցաւ ըստ միութեան ոչխարացն՝ մի իշխանութիւն արածողացն։



ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Ասէ Ուիկալթն, ոչ և այս մեծութիւն է նորա՝ զի զմահն նշանակեաց Քրիստոս. ասէ «Յորժամ ծերասցիս, ձեռս 'ի վեր կալցես՝ և այլք ածցեն քեզ գօտի, և տանիցեն զքեզ՝ ուր ոչն կամիցիս. նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած »։

Պատասխանի. նախ զի յաղագս երկոտասանիցն իշխանութեան անզանազանութեան է առաջարկութիւնս մեր, և ոչ մահու տրպխտութեան. զի մահն ոչ եթէ հաստատութիւն տէրութեան է, այլ 'ի բաց բարձումն կենաց և իշխանութեան. զի յետ ելիցն ոչ ումեք իշխէ, և ոչ ինչ ունի դիտաւորութիւն այս 'ի բանս մեր։

Այլ պատասխանի։

Իսկ եթէ մեծութիւն թուի ձեզ, ապա ոչ ինչ նուազ երևին յայսմ մասին և մեծասաստքն վասն նոյնգունակ նշանակելոյն և զնոցայն մահ՝ ըստ գրեցելումն, թէ «Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց». և թէ՝ «Մատնեսցեն զձեզ յատեանս,

և 'ի ժողովուրդս տանջիցեն, և 'ի խաչ հանիցեն զձեզ, և սպանանիցեն ». և թէ « Որ սպանանիցեն զձեզ՝ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ ». և թէ « Մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին »։ Եւ արդ՝ զի՞նչ ասէք, միթէ ո՞չ են մահու նշանակք այսոքիկ։ Եւ ոչ վասն տանջանացն զանազանութեան ասէ՝ զորով փառաւորելն զԱստուած. զի բազմազանիքն զմի և զնոյն ունին կատարած, զմարմնոյն միայն մեռանիլն, որպէս ասաց Տէր։ Եւ վասն մահուն որպիսութեան՝ որ է ելք, քանզի յերկուս բաժանի մահ մարդոյ՝ 'ի չար և 'ի պատուական. որպէս ասէ մարգարէն Դաւիթ յերեսներորդ երրորդ Սաղմոսին, թէ « Մահ մեղաւորին չար է ». և 'ի հարիւրերորդ տասներորդ հինգերորդ Սաղմոսին, թէ « Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց ». վասն որոյ 'ի բաց հանէ 'ի նմանէ զչար մահուն երկիւղ՝ և ասէ, պատուական մահուամբն մեռանիլ որով փառաւորի Աստուած։ Եւ զի յատուկ ասէ ցՊետրոս՝ հաստատէ զնա վասն դիւրափոփոխ գոլոյ բարուցն. որպէս 'ի ժամ չարչարանացն՝ և թէ 'ի խնդրելն սատանայի, ես

աղաչեցի վասն քո . և զայս ոչ ոք յան-դգնի առնել , թէ մետասանքն ոչ փա-ռաւորեցին զԱստուած մահուամբ . և զի մի են ելք նոցա՝ միապէս և զմրցա-նակն խոստացաւ նոցա Տէրն . « Դուք ասէ , որ եկիք զկնի իմ՝ 'ի միւսանգամ գալստեանն յորժամ նստցիմ յաթոռ փառաց իմոց , նստջիք և դուք յերկո-տասան աթոռս դատել զիսրայէլ » . որ է բանս այս զօր կատարման անզանազա-նութեան նոցա . որպէս անդ՝ ըստ այ-նըմ և աստ , և եթէ ոչ անդ՝ և ոչ աստ , և բոլորն բարձաւ ձերդ իշխանութիւն տալով զճշմարտութիւնն :



ԲԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ասէ Նիկաթն , ո՞չ ահա մեծի իշխա-նութեան ցոյց է՝ որ պատմի 'ի գործս Առաքելոցն , թէ « Յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս 'ի մէջ եղբարցն՝ ասէ , ա՛րք եղբարք՝ պարտ էր կատարել գրոյն վասն Յուդայի , որ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս մեր . սա ու-ռուցեալ հերձաւ . արդ՝ պարտ է յա-րանցս որ ընդ մեզ են , վկայ յարու-թեանն Քրիստոսի լինել ընդ մեզ » :

Պատասխանի . ըմբէ՛ իմաստութե՛դ
ձեր . զի զկատարելապէս հաստատու-
թեան զյայտնութիւնն ոչ իմանայք , զի
զերբառն տալ իբր 'ի մեծութիւն յիշէք
զնորա , և զոչն կարել ձեռնհասաբել յա-
տիճան երկրպագանեցն զոր վասն հասկա-
կարգութեանն՝ ոչ անէք զնոսա : Զի
այս է իշխանին յառաջ ածել զընտրեալ-
սըն՝ յորոց տուեալն է 'ի Տեառնէ ընդ-
հանուր իշխանութեամբ , և տալ իշ-
խել իւրոց վիճակելոցն . զոր ոչ ընկա-
լեալ 'ի վերայ մեռատանեցն , որպէս ին-
քըն ցուցանէ՝ յԱստուած վերաբերելով
զընտրութիւնն ըստ ինքեանց 'ի Տեառ-
նէ , և 'ի Հոգին սուրբ զզօրութիւն ըն-
դունելութեան : Այլ և զայս ոչ կարէք
ասել՝ թէ ոչ ունէր իշխանութիւն ձեռ-
նադրութեան , զի թէ ոչ Պետրոս՝ և ո՞
այլ ոք . բայց որոց տուաւն՝ զոր այժմ չ-
ունիք : Իսկ եթէ ասիցէք անկատար
գոլ , թէպէտ յետ Յարութեանն վասն
չև ևս ընդունելոյ զՀոգին սուրբ . ա-
պա զի՞ պարծիք անկատարիւքն իբր կա-
տարելովք . իսկ եթէ կատարեալ՝ որպէս
և էրն , ընդէ՞ր ոչ խոստովանիք զհա-
ւատարութիւնն :

Այլ դարափոխն ։

Դարձեալ՝ հարցանեմք վասն խրատուն. ասացէք՝ եթէ զի՞նչ նշանակ է իշխանութեան, որ և նուաստագունիցն պատահէ առ յոյժ բարձրագոյնսն, որպէս և ունիմք զայն 'ի գրոց ցուցանել յԵլիցն ։ Արդ՝ յորժամ եկն Յոթոր աներն Մովսեսի առ Մովսէս՝ և եսես զտառապանս նորա 'ի բազում հոգոցն որ յամբոխէն, ասէ ցՄովսէս. « Ոչ է ուղիղ բանդ՝ զոր առնես, անհնարին տանջանք է քեզ և ժողովրդեանդ. ոչ կարես միայն առնել, ես տաց քեզ խրատ. լե՛ր դու ժողովրդեանդ առ 'ի յԱստուծոյ, և տարցես զբանս դոցա առ Աստուած. և դիցես դոցա վկայութի՛ զհրամանացն Աստուծոյ և զպատուիրանաց նորա. ընտրեա՛ արս Աստուածապաշտս որ հեռի իցեն յամբարտաւանութենէ, և կացուսցես հազարապետս մինչև ցտասնապետս, և թեթևասցի 'ի քէն. և այլ ևս յոլովս ։ Ապա լուաւ Մովսէս ձայնի աներոյն, և արար ամ̃ ասաց նմա ։ Արդ՝ մե՞ծ ասես զՅոթոր քան զՄովսէս զաստուած կոչեցեալն 'ի Տեառնէ. զի և տարեքք ոչ ելանէին ընդ հրամանս նորա. և զի՞նչ է զայս ասել առ ծայրագոյնն իմաստութի՛ որ և եղև ։

Ի Գրոց Թուոյն ։

« Ասէ Տէր ցՄովսէս, մինչև ցե՞րբ բարկացուցանէ զիս ժողովուրդդ․ Թո՛յլ տուր ինձ, զի հարից զդոսա մահուամբ։ Եւ ասէ Մովսէս․ Տէ՛ր՝ իսկ արդ լուիցեն Եգիպտացիքն և ամենայն ժողովուրդ երկրիս, թէ դու Տէր 'ի ժողովրդեանս յայսմիկ ես․ և սեամբ ամպոյ երթաս դու առաջի դոցա 'ի տուէ, և սեամբ հրոյ 'ի գիշերի, և սատակեսցես զժողովուրդս զայս իբրև զայր մի, խօսեսցին ազգք՝ որ լուիցեն զքէն և ասիցեն, վասն զի ոչ կարէր Տէր տանել զժողովուրդն զայն յերկիրն՝ զոր երդուաւ նոցա յանապատին։ Եւ ասէ Մովսէս, արդ բարձրասցի ձեռն քո Տէ՛ր․ Թո՛ղ զմեղս սոցա ըստ մեծի ողորմութեան քում, որպէս ներեցեր դոցա յԵգիպտոսէ մինչև ցայժմ։ Եւ ասէ Տէր ցՄովսէս՝ Ներեցից դոցա ըստ բանի քում»։ Եւ արդ՝ զի՞նչ ասէք առ այս, միթէ մեծ ո՞ք է Մովսէս քան զԱստուած, զի ետ Տեառն զխրատս զայս, յորոց զբազումս կարճեցաք վասն յերկարութեան։ Ահա անվաւեր ցուցաւ և այս, և այն՝ կրկնակի։

Հաստատ պատասխանիք չարեացն բանից ՚ի յեղծանացն՝ զոր ասաց Տէր առանձնակի ցՊետրոս, զորս կարծէին մեծութիւն զող նմա, և նովաւ ինքեանց՝ Հռովմայեցիք. զի երեքն այլ ոչ տան զօրութիւն կարծեաց նոցա՝ թէպէտ և ոչ այսոքիւք: Եւ համեմատութիւն ընդդէմ նոցին ՚ի նուաստացուցիչ ասացելոցն:

Իսկ եթէ ասիցեն Հռովմայեցիքն, եթէ ոչ ետ կրկին իշխանութիւն Պետրոսի Քրիստոս՝ ընդէ՞ր զմեծամեծ բանըս զայսոսիկ բաց յընկերաց նորա ասէ ցնա:

Նա որս ասասցուք նախ՝ թէ ոչ նորոգ ինչ ետ պարգեւս նմա, այլ ՚ի տուեցելոցն հաստատակաց՝ կրկնեաց առ նա. և այսոքիւք՝ որք միոս ունին, նուաստութեան և անհաստատ լինելոյ են ցոյցք նմա՝ և ոչ կրկին իշխանութեան և վեհագունութեան մետասանիցն, վասն անխախտ կալոյ մնալոյ ՚ի տուեալ իշխանութիւնն նոցա ՚ի Տեառնէ:

Իսկ դուք բարձրացուցանողքդ պարծիք, և զնուաստացուցանողքն զանց առնէք. և զի ասաց՝ թէ «Դու ես վէմ» և զայլսն զմտաւ ածէք, և զոր ասաց թէ «սատանայ իմ ես» և զնմանսն սորա ոչ յիշէք. զի որ ասացն՝ թէ «դու ես վէմ, և յայդր վերայ շինեցից զեկեղեցի իմ»

Նա ասաց՝ թէ « սատանայ ես իմ , և գայթակղութիւն ես իմ » . և որ հրամայեաց՝ թէ « Տաց քեզ զփականս արքայութեան երկնից » , նոյն Քրիստոս բարբառեցաւ՝ թէ « ոչ խորհիս զԱստուծոյն » այսինքն զարքայութեանն : Նոյն որ խոստացաւ առ նա՝ թէ « դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո » , նա կոչեաց զնա « թերահաւատ և երկմիտ » : Նոյն որ մնկայաւել երիցս՝ թէ « Արածեա զոչխարս իմ » , նա գուշակեաց զնմանէ՝ թէ « երիցս ուրասցիս զիս » :

Տեսանէք՝ թէ որպէս համեմատեցան միմեանց կողմանքն երկոքեան ; և այսու-քիկ ասացան 'ի նախախնամութենէն Աստուծոյ . զի մեծամեծքն դեռ ևս են 'ի հաստատութիւն մերոյն՝ և 'ի նորո-գումն նուաստացուցանողացն ; և 'ի հա-տումն երկուց մեծ ախտից՝ բարձրացո-նութեան և գայթակղութեան . զի դուք մի մեծոմքն ամբարտաւանեսջիք՝ որպէս կրէր 'ի ձեզ , և այլք մի ներհա-կէք գայթակղեալք՝ նուաստ համարեա-ցիք զՊետրոս քան զընկերսն :

Իսկ եթէ ասիցէք թէ , Աստուած անզեղջ է 'ի բարերարութիւն , և անդր-ջուջալ 'ի սխալանս 'ի զղջանսն . այո՛

զի որ ոչ հաւատայ այսմ, եղիցի անկցին 'ի լաւագոյն զօրութենէն. այլ եթէ ոչ էր արժան յիշել զնաւաստապետն յայսըմ վայրի՝ և ոչ արժան ընթեռնուլ յաւետարանին ։

Արդ՝ հարկ է ձեզ, կամ արտահանել ոչ ընթեռնուլ յեկեղեցի և մեղադրել հոգւոյն սրբոյ խօսօղին զբանս զայսոսիկ, և կամ արտաքս հանել 'ի գրոցն։ Իսկ եթէ այս անհնարին է՝ զի հոգին սուրբ գրով իւր արձանացուցանել մըշտընջենաւոր յարակայութեամբ, ապա հարկ է ոչ զանց առնել որպէս զմեծամեծօքն՝ այնպէս և զփոքունքն ըստ հաւասարակ գրեցելումն.

Իսկ եթէ փոքունքն ոչ են 'ի պատճառս նուաստութեան, և ոչ մեծամեծքըն 'ի պատճառս բարձրայօնութեան. և եթէ ոչ այն՝ և ոչ այս, ապա յերկուցն է մեզ հրաժարելի յախտիցն ասացելոց, և զմիջինն ընթանալ պողոտայ անխոտոր՝ և երկոտասանական իշխանութեամբն միայն պատուել զՊետրոս. վասն զի այս իսկ են կամք երանելեացն դասու՝ որ յամենայն ուրեք հաւասարակութեան աշակերտեցան. ըստ այնմ, թէ «Ամենեքին դուք եղբարք էք». և

թէ՝ « Հա՛յր՝ եղիցին և սոքա մի, որպէս և մեք մի եմք »․ և մեզ զնոյն ուսուցին, թէ « Յոր կոչեցարուքն՝ ’ի նմին կացջիք »․ և թէ « Յամենայնի որ է ’ի ձեզ՝ մի ինչ առաւել խորհել քան զարժանն, այլ խորհիլ ’ի զգաստանալ՝ » ’ի հաւատացեալսն իւրաքանչիւր ումեք ’ի Քը-րիստոսէ Աստուծոյ մերմէ․ որում ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն փառք՝ իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։



ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

Յաղագս անդրանկութեան առ միմեանս երկոտասան Առաքելոցն. և հասարակ ընդունելոյ 'ի Քրիստոսէ իշխանութիւն. և ինքնագլուխ գոլոյ իւրաքանչիւրոցն ընդդէմ հակառակելոցն միապետութեանց՝ զոր առանձինն առնուն 'ի Պետրոս։

ՆԱԽ՝ հասարակ ասաց Քրիստոս, « Դուք էք աղ երկրի » առ 'ի բառնալ զանհամութիւնս նոցա։

Բ. « Եւ դուք էք լոյս աշխարհի » անծածկելի՝ առ 'ի փարատել զխաւարն անգիտութեան 'ի բոլոր տանէս։

Գ. « Եւ զերկոտասանսն կոչեցեալ առ ինքն, ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն 'ի վերայ ամենայն դիւաց և ցաւոց. և առաքեաց քարոզել զարքայութիւնն Աստուծոյ »։

Դ. Եւ նոցա միայն ասէ Յիսուս՝ « Ամէն ասեմ ձեզ. զի դուք որք եկիք զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան իմում՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգն Իսրայէլի »։

Տեսանէք՝ թէ ո՛րպէս ընդ իւր ցու-
ցանէ անզանազան զնոսա առ միմեանս,
որպէս աստ՝ և անդ. և որոշէ զնոսա յայ-
լոց զհետ ընծայեցելոցն, թէ և նոքա ասէ
հարիւրապատիկ առնուն և զյաւիտե-
նականն կեանսն, բայց աթոռ ոչ խոս-
տանի վասն անհամեմատութե՟ նոցա։

Ե. Եւ նոցա հաւաստար ասէ՝ «Ձեզ
տուեալ է գիտել զխորհուրդ արքայ-
ութեան երկնից»։ Զի՞նչ մեծագոյն իշ-
խանութիւն ասէ ոք գոլ քան զայս.
և զայս՝ որով նոցա պարծիքն մեծ գոլ,
նա ամենեցուն եւս։

Զ. «Ամէն ասեմ ձեզ, զի զոր կա-
պիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկին-
նս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղի-
ցի արձակեալ յերկինս»։

Է. «Եւ մատուցեալ Յիսուս խօսե-
ցաւ ընդ նոսա՝ և ասէ, տուաւ ինձ ա-
մենայն իշխանութիւն յերկինս և յերկ-
րի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես
առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև՝
աշակերտեցէք զամենայն հեթանոսս.
մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա զա-
մենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. և
ես ընդ ձեզ եմ մինչև ՚ի կատարած աշ-

խառքնի »․ և այս՝ բարձրագոյն և աններհակ միայնութիւն ։

Ը. « Իսկ եհան զնոսա 'ի Բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա » ։

Տեսանէք՝ զի ինքն ձեռնադրեաց զնոսա, և եցոյց զինքն միայն նոցա իշխող՝ և ոչ զՊետրոս կամ զայլ ոք ։

Թ. Իսկ թէ՝ « Ուր ես իցեմ, և դուք անդ իցէք․ և ուր երթամ՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք » ։

Ժ. Իսկ թէ՝ « Դուք տեսանէք զիս․ զի ես կենդանի եմ, և դուք՝ կենդանի լինելոց էք » ։

ԺԱ. « Գիտասջիք՝ զի ես 'ի Հօր իմում, և դուք յիս, և ես 'ի ձեզ »․ արդ որ զանհամեմատս զայս իշխանութիւն գիտութեան՝ բնակութե արքայութեանն եւ նոցա հասարակ, զիա՞րդ 'ի փոքունս առաւել կամ նուազ առնէր զնոսա ։

ԺԲ. « Այլ զձեզ կոչեցի բարեկամս․ զի զամենայն զոր լուայ 'ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ » ։ Արդ՝ եթէ զամենայն հասարակ ծանոյց երկոտասանիցն, ապա Պետրոսի միայն զի՞նչ ծանոյց․ զի զանտանելին ոչ ումեք ծանուցանէ վասըն յոյժ խնամոցն ։

ԺԳ. Ասէ թէ՝ «Ես ընտրեցի զձեզ. և եդի զձեզ, զի դուք պտղաբեր լինիցիք. և պտուղն ձեր կացցէ», նմանապէս ասէ կեալ քարոզութեան նոցա:

ԺԴ. Ասէ թէ՝ «Հայր՝ սուրբ պահեա՛ զնոսա յանուն քո, որով ետուր ինձ. զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք. և 'ի վերայ բերէ, թէ քո բանդ ճշմարտութիւն է»:

ԺԵ. «Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ». ամենևին աններհակ եցոյց զմի իշխանութիւնն, զի նախ միացոյց Հարբ՝ և ապա առաքեաց յաշխարհ, և կարկեաց զբերանս զանազանողացն.

ԺԶ. Ասէ թէ՝ «Արդ գիտացին՝ զի զամենայն ինչ զոր ետուր ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ետու նոցա զբանն քո». կրկնեաց վասն առաւել հաստատութեան:

ԺԷ. «Ես զայս իբրև ասաց, փչեաց 'ի նոսա՝ և ասէ, առէք Հոգի սուրբ, եթէ զուրուք թողուցուք զմեղս, թողեալ լիցի. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի». ըստ հաւասարակ ընդունելոյն զՀոգին՝ ետ և զիշխանութիւնն. միապէս պատուիրեաց զօրութիւն ըն-

գուննել 'ի բարձանց, միորակ և զհրեշտե-
նըն ընկալան զերգուսն. և հնչէ անլուծա-
նելի կնքով և անարգելի 'ի ներհակաց
զխորհուրդ բանիս Հօրը, զի ասէ. «Եւ
ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա.
զի եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք.
ես 'ի նոսա՝ և դու յիս, զի եղիցին կա-
տարեալք 'ի մի»։ Արդ, զո՞ր փառս ետ
Պետրոսի արտաքոյ այսր. զի այլն արտա-
քոյ է 'ի նմանութենէ Հօր և Որդւոյ
միութենէն. և այս ոչ է բարեկամու-
թիւն Պետրոսի՝ այլ ներհակն նորին։ Այլ
գուցէ լսիցեմք 'ի Պետրոսէ, թէ որ
զեղջաւոր իմ նուաստացուցանէ՝ նուա-
ստացուցանէ և զիս. և զի այսպէս է 'ի
հաւատարան, որպէս և Քրիստոս հրա-
մայէ, թէ «Որ ուրանայ զՈրդին՝ և ըզ-
Հայր ուրացեալ է»։ և Տէրն ասէ, թէ
«Որ զձեզ պատուէ՝ զիս պատուէ»։ ըզ-
ձեզ ասէ՝ և ոչ զՊետրոս միայն. նոյն-
պէս և հակառակն սորին.

Արդ, որովհետև այսքան շուրջ ըզ-
մեւք մածեալ ունիմք զբազմութիւն
վկայութեանցս, 'ի բաց ընկեսցուք զամ-
բարտաւանութիւն որ է մայր խռովու-
թեան, և զհաստատութիւն տացուք
նոցա ըստ Քրիստոսի. և մի՛ անարգեա-

ցուք, այլ պատուեսցուք նոցայովքն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս։

Յոլովս ունէի գրել, այլ երկեայ 'ի տաղտկութենէ լսողացն՝ զի ատեցողք են բանի։



Վասն Պատրիարքացն զոր խոստացաք առանձինն շարագրել զպատասխանին՝ զոր առ Լիկամթն. յարեսցի 'ի սոյն և ընդդէմ կարծեացն Յունաց. վասն սոցին և Ասորւոց։

Արդ, յորժամ յաղագս նախապատուութեան հայրապետին Հռովմայ ասէր Լիկամթն, այսպէս շարադրէր զյետինսն նորա. եթէ ամենայն Պատրիարք և կաթուղիկոս և արծովէնք (արք եպիսկոպոսք) և վէսք (եպիսկոպոսք), պարտին հնազանդ լինել Պապուն Հռովմայ։ Ընդ որ յոյժ բերբեալ իմ նախանձ, ասեմ. ո՛վ Հայր սուրբ, ոչ է ըստ օրինաց առաքելական Եկեղեցւոյ շարադրութիւնդ՝ զոր առնես, զի ընդ Պատրիարքն զհետ բերես առաքելական աթոռակալին, և զկաթուղիկոսն Հայոց զկնի նորա դասես։ Ու ասա, զի՞նչ է Պատրիարքն, ո՞չ քաղաքի միոյ Եպիսկոպոս. իսկ կաթուղիկոսն Հայոց՝ պետ ազ-

գի միոյ ողջոյն ։ Եւ ոչ անուն իսկ Պատ-
րիարքին յայտ առնէ զպատիւն իւր . զի
ասի Հայրապետ . և զի Հայր է Եպիսկո-
պոսն ժողովրդեանն . և ամենայն որ ե-
պիսկոպոս ձեռնադրի՝ Հայրապետ կոչի .
որ և ըստ այսմ՝ զմի և զնոյն ունին պա-
տիւ Եպիսկոպոսն Սրոյ և Սելևկիոյ և
այլք նմանք սոցին՝ զոր Անտիոքայն և
ընկերքն իւր վասն զնոյնն ունելոյ ներ-
գործութիւն . և եթէ այս ոչ՝ ցուցցեն
յԱստուածաշունչ գրոց , և հաւանիմք ։

Իսկ կաթուղիկոսն Հայոց յոլովս ու-
նի այսպիսի մայրաքաղաքացիս ընդ իւ-
րով իշխանութեամբ , որ 'ի Լուսաւոր-
չէն մերմէ է սահմանեալ , զոր մի ըստ
միոջէ ոչ կարեմք թուել վասն երկա-
րութեան բանի ։ Եւ երկրորդ՝ վասն ա-
ղաւաղելոյն սակս տարաբերութեան ա-
ռաքելական Աթոռոյն Հայոց և թագա-
ւորութեանն ։ Բայց զչորսս զայսոսիկ որ
աններհակ երևին , ցուցցուք . թէպէտ
և 'ի մերոցս ոմանց քար ընդ ոտն թուի ։

Առաջինն՝ կաթուղիկոսն Աղուանից .
Երկրորդն՝ Եպիսկոպոսն Սիւնեաց , զոր
զկնի սորա նախապատուեցին կաթու-
ղիկոսքն Հայոց ։ Երրորդ՝ Եպիսկոպոսն
Հաղբատայ , որ ունի զտեղապահութիւն

կաթուղիկոսին Վրաց, զտեսչութիւն բոլոր Գուգարաց: Զորորդ՝ Եպիսկոպոսն Ռշտունեաց և Մոկաց, որ նստի 'ի Տոսպ գաւառի Աղթամար կղզի:

Իսկ եթէ առիցեն, թէ այդ այդպէս է, ընդէ՞ր ոչ ետուն հրաման ձեռնադրել իւրեանց Եպիսկոպոս այլոցն՝ բայց Աղուանիցն: Վասն ընդ այլոց ազգաց իշխանութեամբ անկանելոյն վիճակաց նոցա, որոց ոչ ինչ է փոյթ վասն բարեկարգութեան մերոյ ազգիս և կարգաց Եկեղեցւոյ; զի մի իշխանաւորութեան բարուք թիկունս արարեալ զնոսա ապստամբեսցին յառաքելական Աթոռոյն, և զրկեսցին 'ի շնորհաց նորին. այս է պատճառն, և ոչ եթէ ոչ ունիմք տալ իշխանութիւն ձեռնադրութեան:

Դարձեալ ասեմ ցՆիկաթն. կաթուղիկոսն անուն և էութիւն յորում վերայ կոչի սեպհական և ճշմարտապէս, եթէ ոչ՝ 'ի Պետրոսի և Յովհաննու և համակարգից նոցա տառանցն. զի նոքա ընկալան հանուր հրաման 'ի Տեառնէ. « Գնացէք, ասէ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս »: Տեսանե՞ս զհանրականքն՝ թէ ո՞յք են, կամ յումմէ ընկալան զկոչումն աններհակ:

Այս դարձեալ, ո՛չ թուղթքն նոցա յայտ առնեն զանուանս նոցա. զի կաթուղիկոսականք կոչին և ոչ այլով անուամբ, որ ցուցանեն զնոսա կաթուղիկոսունս. և զայս ոչ կարէք ուրանալ։ Իսկ եթէ հակառակիք այսմ գոլ, հարկ լինի բաժանել զգիրս կաթուղիկէիցն 'ի նոցանէ, և ցուցանել զգրողսն նոցա, յորոց անուն կոչին կաթուղիկեայք. և զմին 'ի նոցանէ արտաքսել յԵկեղեցւոյ, կամ զգիրսն՝ կամ զԱռաքեալսն. զի հարկ է միումն 'ի նոցանէ թիւր գոլ. զի Եկեղեցի ոչ ընդունի զթիւրութի̃, որոյ ճշմարտութիւնն է ընտանի. և կամ հաւանիլ անսուտ վկայից զոր բերաք, որ և եղեն իսկ առ Նիկաթն, և աւարտեցաւ պատասխանիք նորա։

Ընկալ զընծայող իմ զաակաւ զոր Ձեզ նուիրեմ, արքայ Հեթում. մեծ էր խնդիրն քո քան զիս, և իմաստնոյ գործ նա՛ այլում, զի գեղեցիկ գրէր քան զիս ըստ արժանեաց տեսոյ մտաց քում. լեր անարգամեծար առ իս, և նմանեա առա Տեառն քում։

Ընդդէմ կարծեացն Յունաց ։

Յայնք չորս տեսն նախաթոռս, ըղկոստանդինուպօլիս, զԱնտիոք, և զԱղէքսանդրիա և զՀռոմ, մինչ աննախանձք էին. և բաց աթոռոցն 'ի չորս բաժանեն զբոլոր տիեզերս ։ Իսկ սահման հատանեն կոստանդինուպօլսի զԹրակիա, զՄակեդոնիա, զՀելլադա, և յԱսիոյ զարևմըտեայ հիւսիսի լերինն Տորոսի, 'ի Պամփիլեայ մինչև ցԵգեր և ցՀայս, և զաշխարհն Սարմատացւոց ։

Իսկ Անտիոքու՝ զհարաւոյ Տորոսի 'ի Սուրացւոց մինչև ցպահակն ծուրայ, որ հատանէ 'ի Գալիլեայ Պաղեստինացւոց, և անդուստ 'ի Պարսս, և անդր ևս յաշխարհն Ճենաց ։

Իսկ Աղէքսանդրու՝ յԵգիպտոսէ սկըսեալ զբոլոր Լիբիա, մինչև ցանծանօթ ծով և երկիր ։ Իսկ աթոռակալաց սոցա անուանս յօդեն կրկին պատուով. ըղկոստանդինուպօլսին տիեզերական կոչեն պատրիարք, և զԱնտիոքայն՝ աստուածաքաղաքացի և ամենայն արևելեան, և զԱղէքսանդրուն՝ դատողական ։ Իսկ Երուսաղէմի՝ որ օրէն էր քան զամենայն նախապատուել, որպէս ողորմելով նմա

հազիւ տան վիճակ զՊաղեստին միայն․ և զայս անագան ուրեմն քան զայլսն, կամ 'ի տեղի Հռովմայ իբր կարկատ և կամ ամօթոյ է վասն մեծագործութեց, և ոչ արժանաւորապէս։

Իսկ Հռովմայեցիք, թէ և Յոյնք տան զայս իշխանութիւն, ոչ առնուն յանձն զատութիւնն, այլ ըստ ճշմարտութեանն Առաքելական կոչեն զինքեանս աթոռ։

Եւ սոցա տան Յոյնք զսկիզբն շնոր-հաբաշխութե Եկեղեցւոյ․ և 'ի սոցանէ որք ոչ առնուն՝ անկատար և անվաւեր ասեն, մանաւանդ զՀայք․ և զայս այն-քան հռչակեցին անհիմն և անհաստատ պատճառս դնելով, մինչ զի և զայլս ըզ-կնի ինքեանց ձգեցին, և յիմաստնոց անգամ։

Եւ արդ, տեսցուք զստուգութիւն աւանդութեանս․ Նախ 'ի բաց ընկեցեալ զհետ և զոչ բարւոք նախանձն, որ ըզ-բարւոքն ոչ բարւոք առնէ․ և ապա օ-տարին ոչ լսել ձայնի, և զհետս ընթա-նալ անմտաբար պաճուճեալ առասպե-լական յօդուածոց․ այլ ճշմարտի հե-տևիլ Հովուին վարդապետութեան, որ ասէ՝ « Մի կոչէք զոք ուսուցիչ ձեզ, զի մի է ձեր վարդապետ » Քրիստոս․

և որ նոյնն խօսէր՝ ասէ . « Չիք այլ ոք ոչ կարէ դնել , քան զերդեալն՝ որ է Յիսուս Քրիստոս ։

Հարցանեմք նախ ընդ այսպիսի առաջողսն , եթէ յե՞ր հիման վերայ ունիք զշինուածդ զայդ . և կամ յումմէ՞ ունիք քաղաքս այսոքիկ զերկխանութիւնս զայս ծայրադայն ։ Եթէ ՚ի Քրիստոսէ ասէք , որ կարողն է տալ , զայդ ոչ կարէք ցուցանել . զի Տէրն զդաւաճանս ոչ հիմնեցայց զնոսա , և ըստ հաւատոյ անձանց ոչ եկին ՚ի սոսա , և ՚ի ձեռն հրովարտակի ոչ պարգևեաց՝ զոր ասէքդ ։ Իսկ եթէ յԱռաքելոցն ասէք առեալ՝ որոց Քրիստոս եւս զվեհագոյն պատիւն , ՚ի նոցանէ ոչ երբէք ուսելի ինչ առեալ նոցա պատիւ քան զտիեզերաց ամենայնի ։

Գիտեմ զի ասէք զայս վասն Անտիոքու միայն , թէ անդ եկին Պետրոս և Պօղոս ըստ գրեցելումն , և հաստատեցին Եկեղեցի ։ Նա որս ասեմք . եթէ նախապատուութիւն է այս Անտիոքու , ապա այլքն որ ոչ ունին զայս՝ զորս հաւատար սորա պատուէք , բոլորովին են անպատիւք . և նախապատուագոյն քան զնա Սամարիա , ուր իջեալ նախ բաշխեցին զՀոգին սուրբ Պետրոս և Յով-

Հանճէս . և այս կեսարիա Գաղատիո-ծագուոյ , ուր Գերասիս նախ Հաստատեալ աւազան , և ուղղեաց մեծագին սուրբ , և շուրջ յոլով անեղիս , մինչև Հասոյն անդ .

Դարձեալ Հարցանեմք , եթէ քա-ղաքօքն ճոխացուցանէք զաստիճանս զայդ՝ զոր առաջին պատուէք , եթէ ու-րիճանօքն զքաղաքսն . զի եթէ քաղա-քօքն ասէք . քաղաքօքն ոչ ունին զհե-ղեանց պատիւն՝ եթէ ոչ ՚ի չինաղայն յորոց անուն կոչին այժմ , և նոքա ոչ է մարթ , զի անստուածք էին . Իսկ եթէ վասն քաղաքականութեան մարդկանն , Եկեղեցւոյ զայդ ոչ առնու յանձն՝ լսելով ՚ի Քրիստոսէ զհրամանն , թէ « Դուք չէք յաշխարհէս աստի , որպէս և ես չեմ ». և զառաքելականին Ցեառն՝ թէ « Օ խորհրդ-կալք Հաւատոյ՝ որ փառս ՚ի մարդկա-նէ խնդրէք ». զի յառ ՚ի միոյն Աստուա-ծոյ որոշի ՚ի փառաց , ասէ՝ որ ոչ յաստու-ծոյն , յորմէ Հրամայիր յաւէտ ա-ղաղակելով , թէ « Ինձ աշխարհս ՚ի խաչ ելեալ է այսուհետև , և ես աշխարհի ».

Արդ , եթէ աշխարհականօքն զքաղաքսն ասէք , ցուցէք թէ ո՞ւմ են աթոռք ո-րով ճոխանան . զի թէ յԱռաքելոցն ա-սէք որպէս ցուցան ; նոքա ոչ ինչ ա-

ւելի ներգործեցին 'ի նոսա քան 'ի բոլորս : Եւ դիր և տեղի որբոց նոցա նշխարացն ոչ են 'ի քաղաքըդ յայդուսիկ, որ է ճշմարտապէս աթոռ և պարծանք որոց ունին :

Իսկ եթէ Աւետարանչօքն ասէք ճոխ գոլ պաշտօնեայսն և զքաղաքսն, հարցանեմք, ո՞յք են Աւետարանիչքն, թէ ոչ՝ որ ընկալան զաւետիսն Հօր ըստ անսուտ խոստմանն Որդւոյ. և հրաման առին ուսուցանել՝ զոր եկեալ յիշեցուցէ նոցա, որ և երկուքն 'ի նոցանէ են որք գրով արձանացուցին, և այլ երկուքն 'ի նոցանէ գոլ խոստովանին ընկալեալ զոր գրեցինն՝ ըստ Ղուկայ, « Եթէ աւանդեցին մեզ որք 'ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին » : Եւ յայսցանեաց որպէս ցուցան՝ ոչ ումեք դիր տապանի է, և ոչ աւելի ինչ ներգործեալ 'ի քաղաքսն յայնս : Եւ դարձեալ, երիցն որք գրեցին՝ յայտնի է տեղին ուր աւանդեցին զԱւետարանն, և ընկալան զկատարած կենացն, որոյ ոչ էք անգէտ՝ զոր անուամբ միայն ջանայք պատուել զնոսա : Իսկ թերևս անձամբ ասէք առնուլ զիշխանութիւն զայն մեծ, զի այլ ոչ ունէք երևի տուեալ. այլ

տյեամ ոչ ներէ Աստուած Հայր՝ ասելով․ «Ընձամբ թագաւորեցին՝ և ոչ ինև․ ընթանային՝ և ես ոչ առաքէի զնոսա․ մարգարէանային՝ և ես ոչ խօսէի 'ի նոսա »․ և Որդի, «Իւէ ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր՝ խլեսցի »։

Դարձեալ հարցանեմք․ շորք ընդէր ասէք գոլ նախաթոռս, զի Քրիստոս երկոտասանս ընտրեաց՝ զի իցեն շուրջ ըզնովաւ, որպէս և գրեալն է․ և որոց սաս նոցին և 'ի հանդերձեալն խոստացաւ ընդ իւր լինել․ «Նստջիք, ասէ, և դուք ընդ իս յերկոտասան աթոռս »։ Արդ, ասացէք եթէ առ ո՛ւնին զյառաջադիմութիւն՝ զի առաջին կոչէք զնոսա հարս․ զի առ Քրիստոս ո՛չ կարէք ասել, զի նոքա ցուցան 'ի նմանէ թէ ոյք և կամ քանիք իցեն։ Արդ, հարկ է այսմ սահմանողաց և ընդունողաց ուսուցանել զՔրիստոս որպէս ասէս՝ անպատշաճ գոլ զհիմնեցեալն առ 'ի նմանէ․ և արտաքսել զխոստումն աթոռոցն 'ի գրեցելոցն նորա, և խափանել զերկոտասանն, և դնել շորք ըստ իւրեանց, որպէս և խափանեցին ինքեանք զՅովհաննուն և զբոլոր երկոտասանիցն․

և կամ զհանկարծակին ընդունել. զի զայն ոչ կարեն. զի հրամն այդ որք ոչ կարէ գտնել քան զեղեալն. և որ աւետարանէ քան զաւետարանեալն այլ՝ նզովեալ լիցի։

Այլ ըստ ձեզ դարձեալ եղիցի չորք ըստ Աւետարանչացն. Որգ. աւետարանիչքն ուսոյ ունին զկոչումն՝ քան թէ յաւետարանելոյն զբանն կենաց, որպէս Առաքեալքն յառաքմանէն, և Մարգարէքն 'ի նախատեսութենէն, յորմէ և իշխանութիւնն նոցա։ Որգ. եթէ աւետարանելն է ներգործութիւն նոցա, և 'ի գործոյ անտի տայք նոցա ունել զիշխանութիւնդ զայդ 'ի վերայ տիեզերաց, հարկ է իշխանութեանն զգործն հետևեցուցանել. և ոչ այլում ումեք տալ թոյլ ընթեռնուլ զԱւետարանն՝ քան թէ նոցա միայն յորմէ ունին զայն սկիզբ իշխանութի. Եւ կամ որոց տայք զգործն՝ նոցին հաւատարել զանթուակալն, և սարկաւագարան կոչել զքաղաքն և ոչ պատրիարքարան. զի սարկաւագացն տայք զաւետարանչութին, որ են յետոյն յաստիճան, և քահանայիցն անգամ՝ ոչ արժանացուցանէք ընթեռնուլ, որպէս զվերջին և զանպատիւ իր յեկեղեցի։

Աշ. պատասխանի ։

Դարձեալ. ընդէ՞ր կոչէք զեկեղեցիդ զայդոսիկ կաթողիկէ . զի կաթողիկէն առաքելական է, և առաքելականն կաթողիկէ . զի ընկերք են և ոչ է հնար առանց միմեանց ասել, որպէս և թուղթքն կաթողիկեայց ։ Նոյն ցուցան՝ զի Առաքելոցն ոչ ոք գոյ 'ի նոսա . և զի ոչ կոչէք զաթոռակալս նոցա կաթողիկոս . և զի հարկ է առանց ամենայն հակառակութեան կաթողիկոս կոչել՝ յաւմէ կաթողիկէ , և ոչ պատրիարքք՝ զի ոչ պատրիարքարան կոչի ։ Իսկ եթէ ոչ կոչէք կաթողիկոս , և արդ ոչ կաթողիկէ . և թէ ոչ կաթողիկէ , և ոչ առաքելական . արդ ընդէ՞ր խաբէք . և խաբէք զպարզամիտսն ։

Դարձեալ, զի ասէք 'ի ձեռն չորից պատրիարքացն լինել զկատարումն խորհրդոյ Եկեղեցւոյ , և որք ոչ առնուն 'ի նոցանէ՝ անկատար ։ Արդ , եթէ այդպէս է, հարկ է ձեզ զՔրիստոսի աւետարանն սուտ էր ասել հանդերձելոց պատրիարքացն , և զքարոզութիւն Առաքելոցն , զքրիստոնէութիւնն , որ մինչ 'ի սահմանումն պատրիարքացն 'ի Կոստանդի-

նուաղելս 'ի Յուստինիանոսէ՝ կամ ով որ էր, անկատար. և լուսոյն Քրիստոսի և Աւետարանին՝ զպատրիարքսն։ Իսկ եթէ Առաքելովքն լի քարոզեցին, մինչ զի և ոչ հրեշտակաց կարօտանալ ըստ Պօղոսի, ապա ընդունայն են պարծանքդ ձեր և նոքին իսկ ինքեանք։

Դարձեալ, յորժամ ունիք Յոյնք զիշխանութիւնդ զայդ, զի ձեզ համարիք զպատիւ չորեցունցն. զի թէ յԱստուծոյ առէք տուեալ զպատիւն զայն այնց քաղաքաց, ապա պատուեալն յԱստուծոյ հոգևոր է։ Իսկ հոգևորն պատիւ ոչ յափշտակի մարմնապէս բռնութեք. զի դեռ ևս իւրաքանչիւր ազգացն որոց են գաւառքն՝ վերակոչի անունն, որոց յոյժ է պատշաճ, և ոչ ձեզ. իսկ եթէ հակառակիք ձեզ գոլ, բռնադատէք զանբռնադատելի տէրութիւնն։ Իսկ եթէ ոչ բռնադատի աստուածայինն ըստ բնութեանն, ապա թափուր էք յայնմ պատուոյ, և ընդունայն պարծիք։ Իսկ թէ խոստովանիք զճշմարիտն, և թէ մերոյ ազգին միայն իշխեմք որոց անդ բնակեն, ապա ոչ 'ի ձէնջ միայն անդ և 'ի գաւառս նոցա պանդուխտք, այլ և յամենայն ազգաց, յորոց և տե-

սուչք հաւատար ձեզ. ապա զի՞ պարծիք համեմատաք այլոց իբրև զատուցեալ ոք .



Վասն կոստանդինուպօլսի առանձինն, որ է յատուկ Յունաց :

ԱՐԴ, վասն կոստանդինուպօլսի հարցանեմք, զի այլք 'ի քաղաքացն զոր ասէք, հնագոյն թերևս պատճառէք զօլ և յԱռաքելոցն կոչեցեալ ըստ հասարակաց կոչմանն. իսկ սա անագան ուրեմն շինեցաւ յետ քարոզութեան Առաքելոցն յոլով ժամանակաւ : Արդ, ուստի՞ ասէք ունել զծայրագոյնութիւն զայն, որ ոչ միայն իշխէ գաւառաց, այլ Եփեսոսի՝ որ է աթոռ Յովհաննու սիրելի աշակերտին Տեառն. թողից զայլսըն. և այնքան անարգէք, մինչ զի յորժամ յափշտակլի 'ի ձէնջ կոստանդինուպօլիս, ոչ համարիք արժան անդ նստիլ եպիսկոպոսին կոստանդնեայ քաղաքին : Այլ թէ ոչ էր ընդ իշխանութեամբ ձերով, մեզ ինչ ոչ գոյր ձեզ. իսկ եթէ ընդ ձեռամբ ձերով է, ապա արհամարհանք է և ոչ անհաստութիւն : Այլ զի նախ քան զայն ժամանակս Եփեսոսի ե-

եպիսկոպոսն ունէր զնախապատուութիւնն Անիոյ ըստ առաքելական պատուոյ Յովհաննու, որպէս ունիմք 'ի պատմութեանց եկեղեցւոյ: Զի յորժամ եղև գժտութիւն ընդ Հռովմայեցիս և ընդ Ասիացիս սակս որքոյ Զատկին՝ զոր այլ և այլ աւուրս կատարէին, որ և Պոլիկրատէս Եպիսկոպոսն Եփեսոսի պարծէր 'ի Յովհաննէս և 'ի Փիլիպպոս, և ասէր ութերորդ զինքն յառաքելոյն. և զոյգ պայքարէր ընդ Բեկտորի եպիսկոպոսին Հռովմայ, որպէս և էր հաւասար նորա:

Արդ, ո՞ փոխեաց զայս սահման աստուածադիր. Թէ զԿոստանդիանոս անէք, Եւսեբի բազում ինչ պատմէ զնըմանէ, և զայդ ոչ յիշէ. և զի՞նչ վայելէր առնել զայդ արդարոյն: Այլ թէ փոխեաց, ոչ արդար՝ այլ անիրաւող, և ո՞ ներէ նմա արդար գոլ, զոր քաւ լիցի 'ի սրբոյն: Իսկ եթէ 'ի Յուստինիանոսէ ասէք փոխեալ կամ յայլմէ ումեքէ, ապա մեծ գոլ համարիք զնոսա քան ըզՅիսուս, որպէս զկարգեալսն 'ի նմանէ՝ քան զառաքեալսն Քրիստոսի. ապա թէ ոչ՝ զի՞արդ ձեռնադրէ Եպիսկոպոսն Կոստանդինու քաղաքին զաթոռակալն Յովհաննու առաքելոյն. զի առանց ա-

մենայն հակառակութեան նուազն ՚ի լու-
ւէ անոր օրհնի, ասէ Առաքեալն. Արդ,
դուք ձեզէն ընտրեցէք զնան ՚ի նուա-
զէն, և ասէք՝ թէ յորոյ վիճակի սակի
էք. դուք ձեզէն տուք զկրաւն, զիարդ
ոչ է յանդգնութիւն, ո՛րք և իցէ, անի-
րաւելն զԱւետարանիչն, և կարգել ըզ-
լաւն ընդ նուազին. և ոչ պատկառել
՚ի պատուական տեղւոյ հանգստեան նո-
րա, և յԱւետարանէն զոր ասէք գրեալ
աստուածաշունչ ձեռամբ նորա, որ խա-
կառակս ցուցանեն դատեղին ամենա նորա։
Իսկ եթէ ՚ի ձեռոյն ասէք աւանդեալ՝
որպէս անտին պատաշած, գուցէ լուիցեն
՚ի Տեառնէ, թէ «Նախորդեցին զաւան-
Թին խմ՝ վասն ինքեանց աւանդութե»։
Իսկ թէ ոչ է այսպէս, զիարդ ոչ խմա-
նայք՝ զի երկոտասանիցն առաց, թէ
«Դուք էք աղ երկրի, և լոյս աշխար-
հի». յորոց մի է և Յովհաննէս. որպէս
թէ և ՚ի նոցանէ համեմիք նոսա և լու-
սաւորիմք յանհամութենէն և ՚ի խա-
ւարէն։ Իսկ դուք զիարդ ընդ կրուկն
դարձուցանէք, և խաւարան ասէք լու-
սաւորել զլոյսն։ Իսկ եթէ լոյս և ոչ
խաւար զոր ասեմք, յումմէ՞ կոչեցաւ
լոյս Կոստանդինուպօլսի աթոռն հակա-

ւանի այսմ լուսոյ. զի ՚ի Քրիստոսէ կոչեցեալքն յայտնի են, և զի լոյս ոչ կարօտանայ լուսոյ, զի անման է խաւարի. ապա հարկ է միում ՚ի սոցանէ սուտ գոլ. իսկ եթէ սոքա ճշմարիտ, ապա նոքա խաւար և ոչ լոյս:

Եւ գլխաւորելով զբանս հարցանեմք. ո՞չ դուք կոչէք Տիաթիկ զբանն զայն յաւետարանին, զոր մերձ ՚ի չարչարանսն գրեաց Տէր: Արդ, ասացէք, ո՞ւմ աւանդեաց զիշխանութիւն Եկեղեցւոյ ՚ի Տիաթիկն. ո՞չ ապաքէն երկոտասանիցն՝ վկայութեամբ և հրամանաւ Հօր հաստատեալ, զոր և ինքեանք իսկ գիտացին, զոր ետ նոցա ասելով առ Հայր; թէ "Արդ գիտացին թէ զամենայն ինչ զոր ետուր ինձ՝ ետու նոցա". և դարձեալ, թէ "Ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա. և որպէս դու զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ". և թէ "Ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւ նոցա յիս": Արդ, եթէ զամենայն ընկալան նոքա զփառս և զիշխանութիւն, և զմիջնորդութիւն մեր առ Որդի, իսկ դոքա զոր նախակարգէք՝ յումմէ՞ ընկալան զիշխանութիւն,

կամ առ ո՛ միջնորդեն. զի եթէ 'ի Քրիստոսէ առնէք և առ Քրիստոս, ոչ կարէք. զի ոչ բաժանեալ է Քրիստոս յանձն իւր. իսկ եթէ հակառակիք 'ի նմանէ գոլ, ապա բաժանեալ է. և բաժանելոյն ո՛չ կարէ կալ թագաւորութիւնն, որպէս և հրամայէ ինքն: Յայտ է զԱռաքելոյն ասել առ ձեզ, թէ «Զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել, և ոչ այլ հրաման 'ի վերայ այնր տալ»: Արդ, զկտակն որ 'ի Քրիստոսէ և 'ի Հօրէ հաստատեալ յերկոտասանսն, 'ի Կոստանդնուպօլիս՝ որ յետ երկու հարիւր ութսուն և մի ամաց շինեցաւ, և այն անագան, սահմանադիրքն զիա՛րդ կարացին խախտել, զի խափանեցին ընդ նոցա աթոռն. զի եթէ խախտելի է, ո՛չ է կտակ. իսկ եթէ կտակ է, ապա անշարժ է ըստ Պօղոսի. մանաւանդ զի Աստուծոյ է, զի ո՛չ ոք կարէ ընդդէմ ասել Նորա կամաց:

Արդ, ո՛վ եղբարք, ոչ եթէ այսու արտաքսեմք զձեզ յերկոտասանիցն պատուոյ, այլ զձեզ վերստին հաստատեմք, թէ ընդունիք՝ շնորհք Աստուծոյ: Միոյն՝ զի զօրացեալ լինիք յեղբօրէ ըստ դրոց, և միւսոյն՝ զի մեք անդա-

անդադար լիցուք յեղբայրականն սիրոյն պարտուց ։

Վասն Հայոց եկեղեցւոյն՝ զի հաւասար է Հռովմայ եկեղեցւոյն և Եփեսոսի, որ այժմ անպատուի 'ի Յունադաւան համապատուութեան Առաքելոյն մերոյ ։

Եւ արդ, եթէ ասեն Յոյնք և Հռովմայեցիք՝ որպէս յառաջագոյն և այժմ՝ ցհայս, թէ դուք ընդէ՞ր պարծիք մայրաքաղաքաւ, կամ ո՞ եկն առ ձեզ յերկոտասանիցն, զի ասէք զձեզ հաւասար մեզ. զի որ եկն առ ձեզ յառաքելոցն Թադէոս՝ յեօթանասնիցն և ոչ յերկոտասանիցն է, և դուք անարգան ուրեմն գործայք 'ի Քրիստոս, և ոչ զհետ մեր ։

Առ որս ասասցուք նախ, թէ մեք ոչ պարծիմք մայրաքաղաքաւ, զի աշխարհական է, վասն որոյ ասէ Տէր՝ թէ “Դուք չէք յաշխարհէ, որպէս և ես չեմ”. և եթէ՝ “Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ”. և մեք յանաշխարհիկն պարծիմք ։ Այլ և զոր գոյն՝ քանդեցին թշնամիք խաչին Քրիստոսի արտասահմանեալ զմեզ. կատարեալ 'ի մեզ բանին Տեառն՝ եթէ “Յաշխարհի աստ

զմեղուլթիւն ունիցիք . այլ քաջալերա-
ցարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի դ.
և մեր խրախուսեալք 'ի Նա՝ պարծիմք
ես ըստ Պօղոսի 'ի Նեղութիւնս մեր
որ վասն Նորա :

Իսկ զոր ասէքդ՝ զԹադէոս յեօթա-
նասնիցն գոլ, զայդ ոչ յառաքելական
մատեանց ասէք՝ ուստի տրամաբանու-
թիւնս մեր, այլ 'ի վիպասան պատմա-
գրաց . իսկ յաւետարանին Մատթէոս
և Մարկոս յերկոտասանիցն զնա Թուեն,
և անուանն փոփոխմամբ ես զնա պատ-
ուեալ Տեառն որպէս զՊետրոս և զոր-
դիսն Որոտման : Իսկ թէ ասէք՝ թէ
Ղուկաս ոչ յիշէ զնա ընդ Նոսա . ոչ է
զարմանք՝ թէ այլով անուամբ նշանակէ
զնա . զի Նոքա ոչ եթէ հակառակք են,
զի եկեղեցիք են Աստուծոյ . իսկ եթէ
դուք հակառակիք, ապա երկուցն վը-
կայութիւն հաւաստարիմ է քան զմիոյն՝
ըստ հրամանի Տեառն :

Իսկ թէպէտ և ըստ կարծեաց ձե-
րոյ ասեմք զնա յեօթանասնիցն գոլ,
սակայն ոչ նուազիմք 'ի ձէնջ, զի ահա
Բարթուղիմէոս և Յուդայ Յակոբեան
և Սիմոն նախանձայոյզ վիճակեցան ազ-
գիս Հայոց : Իսկ եթէ ասիցէք, թէ նա-

քս այլոց ազգաց և ոչ ձեզ վիճակեցան. ցուցէք թէ ում, և հաւանիմք ձեզ. զի 'ի Քրիստոսէ որ տուողն է իշխանութեան՝ ոչ կարէք. զի նա բացարձակ հրամայեաց նոցա, թէ «Գնացէք՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս» անզանազան. զի ուր կատարեսցին մահուամբ, նմին ազգի եղիցի իշխանութիւն նոցա առանց ամենայն հակառակութեան:

Եւ դարձեալ, թէպէտ և տամք ըստ ձեզ՝ ըստ ազգացն և զառաքելոյն բաժանեալ. այլ նոքա օրինակ իւքեանց ունելով զՔրիստոս, և խրատեալք 'ի նըմանէ՝ թէ «Յինէն ուսարուք», և ուսուցանէր ասելով, «Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի». և Յովհաննէս՝ թէ «Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան. իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել». Նոյնպէս և աշակերտքն նորա յիւրեանցն գնացին վիճակ, և ոչ ընկալեալ զնոսա՝ դարձան 'ի նոցանէ ըստ հրամանի Տեառըն, թօթափեալ զփոշի ոտիցն 'ի նոսա՝ 'ի յանդիմանութիւն նոցա: Իսկ առ որս գնացեալ և ընկալեալ եղեն, ետուն

նոցա զիշխանութիւնն՝ զոր առին ՚ի Տեառնէ, ըստ նորին հրամանի՝ թէ որպէս «Զոր առէք՝ և ձրի տուք»: Իւ-օրինակ մեզ Պետրոս. զի նա յառաջ էր որոշեալ վիճակ ՚ի Տեառնէ թլփատութիւնն. և զի ՚ի Հռովմայեցւոցն ընկալաւ զյաղթանակ մարտին, դարձեալ ՚ի նոսա. իսկ այժմ Հռովմայեցւոց առաքեալ է՝ և կոչի. նոյնպէս և Բարթուղիմէոս և այլքն զոր ասացաք՝ մեզ են, և առին. Իսկ եթէ նոքա՝ ոչ մեզ, և ոչ Պետրոս՝ նոցա. ապա եթէ Պետրոս նոցա, Բարթուղիմէոս և այլքն մեզ տուանց հակառակութեան:

Իսկ զոր ասէք՝ անարգան դառնալ մեզ. և այդ յիրաւի, զի ՚ի մետասաներորդ ժամու. և այս ոչ ՚ի հեղգութենէ մերմէ, այլ ՚ի կոչողին ձայնէ էաք վերջնոտեալք. և այս յայտ ՚ի տանուտեառնէն՝ զոր արարն. զի յորժամ յայց ել մեզ ՚ի մետասաներորդ ժամու, և կոչեաց զմեզ ըստ ողորմութեան իւրում յայգին իւր ՚ի ձեռն առաքելաշնորհ առնն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Պարթևին, հաւասարեաց զյօժարութիւն մեր ընդ քրտանց առաջնոցն ՚ի տուրս վարձին, զոր յաչաղեալ առաջնոցն: